ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲՈՒՐԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բուրաստան համայնք
հեռ. 023562330, e-mail: burastani@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հունվարի 2016թվականի N 3 – Ն

ԲՈՒՐԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 19.05.2015թ. N 5- Ն <<ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՓՈԽԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ >> ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70 հոդվածի պահանջներով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

Բուրաստան համայնքի ավագանու 19.05.2015թ. 5- Ն << Հողամասերը փոխանակելու և նվիրաբերելու մասին >> որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները .

Որոշման վերնագրային մասից հետո , առաջին պարբերության մեջ << քաղաքացիներ >> բառից հետո <<Շողոկաթ Գյորգյանի >> փոխարեն կարդալ՝ << Գոռ Ավետիսյանի>> :

Որոշման 1. կետում կարդալ՝

Համաձայնություն տալ Գոռ Ավետիսյանի սեփականությունը հանդիսացող 03-027-0133-0001 կադաստրային ծածկագրով 0.111 հա գյուղատնտեսական նպատակային նշանակությամբ, գյուղատնտեսական գործունեություն գործառնական նշանակության հողամասը (այսուհետ՝ Փոխանակվող հողամաս) Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բուրաստան համայնքի սեփականությունը հանդիսացող նույն նպատակային նշանակության և նույն գործառնական նշանակության (համարժեք որակական հատկանիշներով) 0.09569 հա հողամասի հետ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխանակելու մասին Գոռ Ավետիսյանի առաջարկությանը :

Կողմ -6 Դեմ -0 Չեռնպահ -0

1. ԱՄՐԱՋՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ
2. ԹԱՐՎԵՐԴՅԱՆ ԳՐԻԳՈՐ
3. ՂԱՋԱՐՅԱՆ ՍԵՐԳՈ
4. ՄԱՆԱՍԵՐՅԱՆ ՄԱՐՏԻՆ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ
6. ԱՌԱՔԵԼՅԱՆ ՌՈՒԴԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՇՈՏ ԹԱՐՎԵՐԴՅԱՆ